

## ՀԱՅՐ ՂԵՒՈՆԴ ԱԼԻՇԱՆԸ ՀԱՅԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՌԱՀՎԻՐԱՅ

ինչպէս ժթ. դարի, այնպէս էլ ամբողջ հայագիտութեան անդամաստանում վենետիկի Մխիթարեան միաբանութեան անդամ հայր Ղեւոնդ Ալիշանն ունի առանձնայատուկ տեղ ու դեր: Պատահական չէ, որ յաճախ նկատի ունենալով այդ հանգամանքը, շատ հետազոտողներ նրան են վերագրում հայագիտութեան բազմաթիւ ծիւղերի աննախաղէց վերելքի ապահովման պատիւը սակայն երգեմն մոռանալով այն նպաստաւոր միջավայրը, որի մէջ իր գործունէութիւնն է ակսել Ալիշանը եւ որին պարտական է ոչ միայն ինքը, այլեւ հայագէտների մի ամբողջ ոսկեբոյլ: Անշուշտ, խօսքը Մխիթար աբբահօր հիմնադրած Մխիթարեան միաբանութեան մասին է, որն արդէն ճեւաւորել էր բազմածիւղ հայագիտական մի այնպիսի հզօր դպրոց, որի ներկայացուցիչներն էին ականաւոր դէմքեր Մխիթար Սեբաստացին, Միքայէլ Զամչեանը, Ղուկաս ինձիճեանը եւ ուրիշներ: Ուստի անհրաժեշտ է ընդգծել, որ հայր Ալիշանը որպէս գերհզօր հայագէտ, առնուազն՝ հայ բանասիրութեան, պատմագիտութեան եւ պատմական աշխարհագրութեան երկնակամարում փայլատակած ամենավառ անհատականութիւններից մէկը, ինչու չէ հայագիտութեան բնագաւառում իր հաւասարը չունեցող հզօր ուահվիրայ, առաջին հերթին իր փառահեղ միջավայրի ծնունդն էր: Այսինքն՝ մինչեւ հայր Ալիշանը, Մխիթարեանների հայագիտական դպրոցն իր գրեթէ բոլոր ծիւղերով ոչ միայն կայացել էր, այլեւ հասել էր նոր դարաշրջանի դասականութեան մակարդակի: Մեր կարծիքով՝ հէնց որպանում է Ալիշան-հայագէտի ֆենոմենի գաղտնիքը:

Այդ իմաստով արդար կը լինի յիշատակել, որ նոյնիսկ առանձին գէպքերում հայր Ալիշանը, հիմնուելով իր նշանաւոր նախորդների ստեղծած հարուստ գիտական ժառանգութեան վրայ, խորոշացած միայն հարստացնել Միխթարեանների գիտելիքներն այդ ոլորտում դրանք հասցնելով նոր բարձրութեան: Այդ պարագաների մասին առաջին հայոց պատմութեան մեջ առաջին առանձին հայութեան մասին պատմութեան մեջ առաջին առանձին հայութեան մասին պատմութեան:

գայում, սակայն, նախորդ հետազօտողների ներդրումը ինչ-որ ձեռվով մնաց ստուերի տակ՝ նոյնպէս վերագրուելով հայր Ալիշանին: Բայց այդ հանգամանքի մատնանշումը, անտարակոյս, ամենեւին չի նսեմացնում նրա վիթխարի ծառայութիւնների գերը, այլ ընդհակառակը՝ կարեւորում է միեւնոյն գիտական գպրոցի գերակատարութիւնը հայագիտութեան զարգացման գործում:

**Փորձենք ներկայացնել Ալիշանի անցած կրթագիտական ուղին ու այն միջավայրը, որի շնորհիւ վեր յառնեց ալիշանական միտքը եւ վերածուեց հայագիտական հզօր գպրոցի: Հայագիտութեան նկատմամբ պատահի Ղեւոնդ (Քերովքէ) Ալիշանեանի նախասիրութեան ձեւաւորումը պատահական չէր: Նա ծնուել է հնագէտ-դրամագէտ Պետրոս Ալիշանեանի ընտանիքում: Նախնական կրթութիւնը կ. Պոլսի Զալըկեան վարժարանում ստանալուց յետոյ նա 12 տարեկան հասակում ոտք է դնում Ս. Ղազար, աւարտում վանքի գպրոցը եւ 1841 թ. անցնում հոգեւոր ծառայութեան, իսկ մի քանի տարի անց՝ նաեւ ուսուցչութեան ու լրագրութեան՝ նոր հիմնադրուած համբաւաւոր «Բազմավէպ» ում:**

Հայր Ալիշանն իր գրական ու գիտական գործունէութիւնն սկսել է բանաստեղծութիւններով՝ գրուած դասական գրաբարով, Մխիթարեանական բանասիրական դպրոցի կանոններով: Զուգահեռաբառ տարբեր դպրոցներում աշխատանքի ընթացքում դրսեւորում է նաեւ երիտասարդ վարդապետի մանկավարժական տաղանդը. Նա շուտով դառնում է իր սաների սիրելի ուսուցիչներից մէկը:

**ԺԹ. դարի կէսերին հայր Ալիշանի կեանքում սկսւում է գործունէութեան նոր փուլ. նրան վիճակում է Եւրոպայում իրականացնել երկար ու խիստ օգտաէտ շրջագայութիւնների միշտք, լինել Հռոմի, Լոնդոնի զանազան գրադարաններում, Քեմբրիջի եւ Օքսֆորդի համալսարաններում ուսումնասիրել հայկական ձեռագրերը, դրանք ցուցակադրել: Ապա նա մեկնում է Գերմանիա, Աւստրիա, Ֆրանսիա, Բելգիա, Հարստացնում իր գիտելիքները, խորացնում Եւրոպական լեզուների իր լիմացութիւնը: Վերադառնալով Ս. Ղազար՝ հայր Ալիշանն այդուհետ շուրջ կէս դար ծաւալում է հայագիտական բուռն գործունէութիւն՝ ստեղծելով վիթխարի գրական ու գիտական ժառանգութիւն:**

**Ղեւոնդ Ալիշանը հայագիտութիւն մուտք գործեց գրական-գեղարուեստական ստեղծագործութիւններով, որոնց թեման ձեւաւորուել է ժԹ. դարի 40-50-ական թուականներին Եւրոպայում, մասնաւորապէս իտալիայում ծաւալուած ազգային-ազատագրական շարժումների ազգեցութեամբ: Յիշատակութեան արժանի են**

յատկապէս «Բազմավիպ»ում «Նահապեա» գրական կեղծանունով տպագրուած բանաստեղծութիւնները: Հեղինակը, ոգեշնչուած եւրոպական յեղափոխութիւնների գաղափարներով, իր «Պլանը Աւարայրի», «Բամբ որոտան», «Հրազդան», «Մասիսու սարերն», «Աշուն Երկար ի ծովուն Սեւանայ» ստեղծագործութիւնների նիւթ է ընտրում «հայ յեղափոխական իրադարձութիւնները»՝ սկսած Եղամբի ազատագրական պատերազմներից մինչեւ նոր ժամանակներ: Այս ստեղծագործութիւնները յետագայում լոյս են տեսնում առանձին գրքոյիններով՝ շատ ինքնատիպ՝ «Մանկունի», «Հայրունի», «Տիրունի» վերնագրերով: Այս ստեղծագործութիւնների շարքը սերունդներին յիշեցնում է հայ ժողովրդի փառահեղ անցեալը, ազատապերելու անկոտրում կամքը, ապագայի նկատմամբ անսահման հաւատը: Հայր Ալիշանը նոյն թեման արծարծեց նաեւ արձակում «Խորհրդածութիւններ» ընթ և եղանակ» խորագրով: Նրա արձակ գլուխործոցը դարձան «Յուշիկի հայրենեաց հայոց», «Կարմիր Վարդան», «Արգար դպիր» գործերը:

Հայր Ալիշանի գրական ժառանգութեան կարեւոր մաս են կազմում նաեւ տարբեր լեզուներից կատարած մեծաքանակ թարգմանական գործերը: Ցաւելենք նաեւ, որ Ղեւոնդ վարդապետը միաժամանակ հանդիսանում է հայ գիտական բանագիտութեան առաջին հետազոտողներից մէկը:

Անհնարին է շրջանցել նաեւ հայր Ալիշանի ծառայութիւնները արեւմտահայ աշխարհաբարին անցնելու գործում: Պատահական չէ, որ նրա մի շարք աշխատութիւններ գրուած են աշխարհաբարով՝ համեմուած գրաբարի անզուգական բառապաշտուկով ու կանոնական ձեւերով:

Բաւարարուելով հայր Ալիշանի գրական գործունէութեան սոյն թռուցիկ ակնարկով՝ փորձենք անդրադարձ կատարել նրա գիտական ժառանգութեան ամենածանրակշիռ բնագաւառին՝ պատմաշխարհագրական աշխատութիւններին:

Ինչպէս Ժ. դ. վերջին եւ Ժ. դարի սկզբին հայր Ղեւկասինձիճեանը, այնպէս էլ Ժ. երկրորդ կէսին հայր Ղեւոնդ Ալիշանը տասնամեակներ շարունակ զբաղուեցին պատմական Հայաստանի աշխարհագրութեամբ եւ ժողովրդագրութեամբ՝ հեղինակելով մի շարք կոթողային աշխատութիւններ<sup>1</sup>: Սակայն ի տարբերութիւն ինձիճեանի, որն այդօրինակ հետազոտութիւնների ըն-

<sup>1</sup> Հայր Ղուկաս Խնճիթեանի պատմաաշխարհագրական ու ժողովրդագրական քննոյթի աշխատութիւնների մասին տե՛ս ՄԵԼՔՈՆԵԱՆ ԱՇՈՏ, Հայր կան քննոյթի աշխատութիւնների մասին տե՛ս ՄԵԼՔՈՆԵԱՆ ԱՇՈՏ, Հայր

**թացքում** խնդրին առաւելապէս անդրադառնում էր պատմաաշխարհագրական տեսանկիւնից, հայր Ալիշանը զուգահեռաբար ներկայացնում էր նաեւ տուեալ աշխարհագրական միջավայրում տեղի ունեցած պատմական կարեւորագոյն իրադարձութիւնների վերլուծութիւնը:

Հայագիտութեան երախտաւոր վարդապէտն իր առջեւ բարդ ու դժուարին խնդիր գրեց՝ խորացնել նախորդ ուսումնասիրողների պատմաաշխարհագրական բնոյթի հետազօտութիւնները եւ Հայաստանի բոլոր նահանգների վերաբերեալ ստեղծել հիմնարար ու մեծադիր 20 հատորներ: Այդպիսի աշխատութիւններից առաջինը լոյս տեսաւ 1855 թ. «Տեղագիր Հայոց Մեծաց» վերնագրով: Հեղինակը հանդամանօրէն ներկայացրեց Մեծ Հայքի գաւառների Փիզիկաաշխարհագրական, կենսաբանական ու պատմական ընդհանուր բնութագիրը: Հետեւելով հայր Ինճիճեանի օրինակին՝ նա Հայաստանի պատմաաշխարհագրական ակնարկը կատարում է ըստ օտար տիրապետութիւնների՝ տարածաշրջանների՝ Օսմանեան Հայաստան, Պարսից Հայաստան եւ Ռուսաց Հայաստան: Նախ՝ հանդամանօրէն անդրադառնում է գաւառների բնակլիմայական պայմաններին, ապա ներկայացնում Հայաստանի մեծագոյն մասը կազմող Արեւմտեան Հայաստանը, որից յետոյ անցնում է Պարսկահայաստանին ու Ռուսահայաստանին:

Հայրենասէր վարդապէտը Հայաստան աշխարհի անուան բացատրութեան հարցում առաջնորդւում է խորենացիական տեսութեամբ: «Աշխարհն որ յանուն Հայկայ հեղինակի ազգիս եւ լեզուի՝ յորում գրի բանս, կոչի ՀԱՅՔ եւ ՀԱՅԱՍՏԱՆ ի բնիկ ժողովրդենէն, իսկ յօտարաց Արմենիա կամ Արմենից՝ յանուն հայկածին նահապետացն Արմենակայ եւ Արամայ, եւ կամ ըստ պանծանաց բնակչացն առաջնոյ՝ իրեւ Արի-արանց երկիր. իսկ ըստ Սրբազն գրոց Երկիր ԱՐԱՐԱՏԱՅ<sup>2</sup>: Սոյն աշխատութեան մէջ հեղինակն անդրադառնում է օսմանեան տիրապետութեան շրջանում Արեւմտեան Հայաստանի ժողովրդագրական տեղաշարժերին, կրօնական ու էժնիկ այլացումներին, մեր հայրենիքն օրէցօր օտար ցեղերով բնակեցնելու, հայութեանն իսլամ պարտադրելու թուրքական իշխանութիւնների քաղաքականութեանը:

Հուկաս Խնճիթեամի աւանդը Հայաստամի պատմական աշխարհագրութեան եւ ժողովրդագրութեան ուսումնասիրութեան թմագաւառում, Բազմավէպ, 2017, թիւ 3-4, էջ 104-113:

2 ԱԼԻՇԱՆ ՂԵՒՂՈՒՄ, Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ 1855, 7:

ինչպէս այս, այնպէս էլ այլ աշխատութիւններ շարադրուած են ալիշանական ճոխ լեզուով։ Մէջբերենք մի հատուած Արեւելեան Հայաստանի աշխարհագրական նկարագրութիւնից. «Պար կամ աղխաղակոյտ լերանց տարածեալ ընդ լայն եւ ընդ երկայն՝ ընդ մէջ գետոցն Աղասիւոյ եւ Հրազդանայ, ի կողմանց երրորդի պարուն ցգետն Երասխ ընդ հարաւ արեւելից ի կողմանս Գարապաղու, եւ յելից կուսէ ի կողմանց Գանձակայ ցնոյն Երասխ ի սահմանս դաշտին Շարուրայ եւ նախիջեւանայ. զայս պար յանուն ԳԱՐԱՊԱՂՈՒ ի դէպ է կոչել, զի անդ է կենդրոն եւ բազմակողակ կոյտքն լերանց, կամ թէ Կովկաս Հայոց...»<sup>3</sup>:

Ուշագրաւ է հայր Ալիշանի խօսքը Արցախի մասին. Նա չի մոռանում յիշել Արցախի ազնուացեղ ձիերին, որոնց համբաւը տարածուած էր ամէնուր. Պատահական չէ, որ Պարսից արքունիքը Արեւելեան Հայաստանից գանձուող հարկերի մէջ կարեւորում էր արցախիւան նժոյգների ստացումը. «Ի գրաստուց ազգի պատուականագոյն են երիվարք եւ ձիգ նժոյգ Գարապաղու..., զոր փոխան գանձուց հարկերն երբեմն վարիչք աշխարհին՝ դրանն Պարսից»<sup>4</sup>. Անդ-րադանալով Սեւանայ լճի հարուստ ձկնատեսակներին՝ հայր Ալիշանը հպարտօրէն նշում է, որ «ի լինս՝ յորս տառեխ միայն ի Վանայն, իսկ ի Սեւան իբրեւ 15 ազգք ձկանց նանաչին, յորս 12 կոչին հայեցի անուամբք եւ այլազգեօֆ, որպէս Կողակ, Բաղդակ, Աղինեան, Իշխանանուկն, Գեղարքունիք, Կոակսուց, Պէօնէկ, Ամառն, Բեխլու, Կարմրախէտ, Չալաձուկն, Զուարը»<sup>5</sup>:

Սոյն աշխատութիւնից յետոյ պատմաշխարհագրական աշխատութիւնների տպագրման հարցում հայր Ալիշանը որոշ իմաստով դադար տուեց եւ մի քանի տասնամեակ շարունակ առաւելապէս զբաղուեց նիւթերի հաւաքմամբ: Բանն այն է, որ նա որոշել էր բաւարարուել ոչ թէ ընդհանուր ամբողջական Հայաստանի պատմական աշխարհագրութեան ներկայացմամբ, այլեւ հանգամանօրէն ուսումնասիրել ու հրատարակել գործեր Մեծ Հայքի բոլոր նահանգների ու նշանաւոր գաւառների մասին առանձին-առանձին<sup>6</sup>:

3 Անդ, 9:

4 Անդ, 19:

5 Անդ, 20:

6 ԱԼԻՇԱՆ ՂԵՒՈՆԴԻ, Շիրակ, Վենետիկ, Ս. Ղազար, 1881, նոյնի՝ Սիսուան, Վենետիկ 1885, նոյնի՝ Այրարատ. Բնաշխարհ Հայաստանայց, Վենետիկ 1890, նոյնի՝ Սիսական, Տեղագրութիւն պատկերացոյց, Վենետիկ 1893:

Այդպիսի աշխատութիւններից «Սիսուայ»ը, որն իր անունը ստացել է հայկական մայրաքաղաքներից Սիսի անունից, նուիրուած է Միջերկրական ծովի հիւսիսարեւելեան ափին ընկած մի ամբողջ երկրի՝ Կիլիկիայի աշխարհագրութեանն ու պատմութեանը: «Այրարատ»ը եւ «Սիսական»ը վերաբերում են Մեծ Հայքի համանուն երկու նահանգներին: Մինչդեռ «Շիրակ» հատորը Այրարատ աշխարհի մի գաւառի՝ Շիրակի մասին է, որում այդ երկրամասի աշխարհագրութիւնը շարագրուած է կարեւորագոյն պատմական իրադարձութիւններին՝ մասնաւորապէս Անիի Բագրատունիների թագաւորութեան մանրամասն պատմութեանը, զուգընթաց: Հասկանալի է, որ Շիրակ գաւառին առանձին հատոր նուիրելը պայմանաւորուած էր ինչպէս Այրարատ աշխարհի, այնպէս էլ ամբողջ Հայաստանի պատմութեան մէջ նրա ունեցած դերով: Պատահական չէ, որ հայր Ալիշանը Շիրակի, յատկապէս նրա զարգացած միջնադարի պատմութիւնը հաւասարագօր է համարում եւրոպական երկրների, մասնաւորապէս Փրանսիայի պատմութեանը: Հեղինակը հպարտօրէն խօսում է Անիի, Շիրակաւանի, Մարմաշէնի ճարտարապետական հզօր կոթողների, Կումայրի-Ալեքսանդրապոլի, Շիրակի տարածքում յայտնաբերուած հարուստ վիմագիր արձանագրութիւնների եւ բազմաթիւ այլ հարցերի մասին:

Ինչպէս նախորդ աշխատութիւնները, այնպէս էլ «Սիսական»ը շարագրուած է ըստ ենթաշրջանների՝ Գեղարքունիք եւ Սոդք, Վայոց Ձոր կամ Եղէգեայ ձոր, Ծղուկ, Հաբեանդ, Աղահէճք, Բաղք, Կովսական, Ձորք եւ այլն<sup>7</sup>:

Անտարակոյս, հայր Ալիշանի պատմաշխարհագրական աշխատութիւնների շարքում իր նշանակութեամբ հաւասարը չունի «Այրարատ» ծանրակշիռ ու մեծադիր հատորը, որը միաժամանակ ողջ Հայոց Միջնաշխարհի պատմութիւնն ու աշխարհագութիւնն է, բուսաբանութիւնը, գիւղագրութիւնը, ժողովրդագրութիւնը եւ այլն: Հեղինակի կարծիքով՝ Այրարատի տեղը մեր ժողովրդի կեանքում առանձնայատուկ է, քանի որ այն յիշատակւում է Աստուածաշնչում եւ նրա անունից է ծագում մեր երկրի անուանումը: «ԱՅՐԱՐԱՏ անդրանիկ» է աշխարհագրական անուանց երկրի վերածնելոյ մահանիք եւ կենսաշիք մկրտութեամբ ջրհեղեղին,՝ պատկերաւոր գլուխում է հայր Ալիշանը,՝ եթէ իցէ օրէն այսպէս ասել, զոր առաջինն, ի Գրոց Սրբոց մատնացոյց արարեալ ամենայն հաւատացելոց՝ ի յառաջա-

7 Տեղագրութիւն Սիսական աշխարհի, ի Հ. Ղեւոնդայ Մ. Ալիշան, Մ. Միհրարեան, Վենետիկ 1883:

բանի պատմութեան համօրէն: ...Եթէ Ս. Գիրք՝ միայն զմի ի հնգետասան աշխարհացն Հայոց Մեծաց, որ յատկարար ի մեզ կոչի Այրարատ, համարիցին Եշանակել այնու անուամբ, այլ Արարատեան երկիր, Լերինք եւ Ազգ եւ Գունդ»<sup>8</sup>:

**Աշխարհների շարքում հայր Ալիշանն անդրադարձ ունի նաեւ Արցախին, որն անաւարտ մնաց եւ բնականաբար, ամբողջական հատորով նրա կենդանութեան օրօք չհրատարակուեց**<sup>9</sup>:

Անշուշտ, մէկ յօդուածի սահմաններում հնարաւոր չէ անդամ թռուցիկ անդրադառնալ հայր Ալիշանի հարուստ գիտական ժառանգութեան բոլոր կողմերին: Բաւարարուելով վերոյիշեալով՝ միայն արձանագրենք, որ հայագիտութեան տիտանը հեղինակ է նաեւ այնպիսի նշանաւոր երկերի ու ժողովածուների, ինչպիսիք են «Հայրուսակ», «Հայապատում», «Հին հաւատք կամ հեթանոսական կրօնի հայոց», «Արուսակի հայ», «Ռամկական երգ» եւ այլն:

**Ամփոփելով կարող ենք պնդել, որ հայագիտութիւնը, որի հիմքերը դրուեցին Ե. դարում հայ գրերի գիտով, իր մատենագիտական շրջափուլն ապրեց Ե.-Լ. դարերում, ապա Ժ. դարի վերջին եւ Ժ. դարում Միխիթարեան հայրեր Միքայէլ Չամչեանի, Ղուկաս Ինճիճեանի եւ յատկապէս Ղեւոնդ Ալիշանի շնորհիւ հասաւ իր դասականութեան գագաթնակէտին՝ յաջորդ ժամանակների հայագէտների ուսումնասիրութիւնների համար նախապատրաստելով հզօր հենք ու պարարտ հող:**

## ԱՇԽԱՐՀԱԿԱՆ ՄԵԼՔՈՒՆԵԱՆ

<sup>8</sup> ԱԼԻՇԱՆ ՂԵՒՈՆԴԻ, Այրարատ, 1:

<sup>9</sup> 1980-ականների վերջին՝ Արցախեան շարժման օրերին, Մխիթարեաններն Արցախին նուիրուած յօդուածները տպագրեցին «Բազմավնաց»ում, իսկ Երևանի վետական համալսարանը Արցախին վերաբերող նիւթերն առանձին գրքով հրատարակեց աշխարհաբարով: Անտիպ է մնում «Ռւտիֆ» հատորը (տե՛ս ԿԱՐԱՊԵՏԵԱՆ, Գ. Ս., Ղեւոնդ Ալիշան, «Արցախ, Երևանի համալսարանի հրատ., Երևան 1993):